Հավելված
ՀՀ կառավարության 2023 թվականի
դեկտեմբերի 21-ի N 2297 - Լ որոշման

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑԱԾ՝ ԱՆՀԱՅՏ ԲԱՑԱԿԱՅՈՂ ԿԱՄ ՄԱՀԱՑԱԾ ՃԱՆԱՉՎԱԾ ՁԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻՆ ՄԻՆՉԵՎ ԵՐԵՔ ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՅԻ ԽՆԱՄՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. Միջոցառման նպատակն է աջակցություն տրամադրել Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունվարի 13-ի N 64-Լ որոշմամբ հաստատված միջոցառման շրջանակներում աջակցություն ստացած ծնողներին (այսուհետ՝ շահառու)՝ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արդյունավետ կազմակերպման հարցում:

2. Միջոցառման շրջանակում շահառուն երեխայի խնամքը կազմակերպելու նպատակով առցանց եղանակով կամ առձեռն Միասնական սոցիալական ծառայության իր բնակության վայրը սպասարկող տարածքային կենտրոն (այսուհետ՝ տարածքային կենտրոն) է ներկայացնում դիմում:

3. Երեխայի խնամքը կազմակերպելու նպատակով շահառուի և տարածքային կենտրոնի միջև թղթային տարբերակով կամ էլեկտրոնային հաղորդակցության միջոցով կնքվում է աջակցության տրամադրման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր), որի օրինակելի ձևը հաստատում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարը:

4. Պայմանագիրը կնքելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում շահառուն տարածքային կենտրոն է ներկայացնում երեխայի խնամքն իրականացնող անձի (այսուհետ՝ դայակ) կամ վճարովի հիմունքներով գործող նախադպրոցական հաստատության (այսուհետ՝ հաստատություն) հետ երեխայի խնամքը կազմակերպելու նպատակով կնքած ծառայությունների մատուցման պայմանագրի պատճենը:

5. Պայմանագրի հիման վրա յուրաքանչյուր երեխայի խնամքը դայակի կամ հաստատության միջոցով օրական առնվազն վեց ժամով կազմակերպելու համար շահառուին ամսական կտրվածքով վճարվում է գումար՝ ծառայությունների մատուցման պայմանագրով սահմանված ամսական վարձատրության չափով, բայց ոչ ավելի, քան 104000 դրամը:

6. Սույն միջոցառման 5-րդ կետով սահմանված գումարը տրամադրվում է շահառուին՝ մինչև յուրաքանչյուր ամսվան հաջորդող ամսվա հինգերորդ աշխատանքային օրը:

7. Շահառուն ծառայությունների մատուցման պայմանագրով նախատեսված գումարը ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում փոխանցում է դայակին կամ հաստատությանը և փոխանցելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տարածքային կենտրոն է ներկայացնում փոխանցման անդորրագրի էլեկտրոնային պատկերատպված (սքանավորված) տարբերակը, ինչն էլ հիմք է հանդիսանում հաջորդ ամսվա վճարման համար:

8. Միջոցառման շրջանակներում աջակցությունը տրամադրվում է՝

1) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին.

2) օրենքով չարգելված այլ աղբյուրներից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

9. Միջոցառման շրջանակներում աջակցությունը տրամադրվում է մինչև երեխայի երեք տարին լրանալը, անկանխիկ եղանակով՝ շահառուի բանկային հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

10. Աջակցության գումարը չի կարող արգելադրվել (դրվել արգելանքի տակ), բռնագանձվել կամ հաշվանցվել հաճախորդի պարտավորությունների դիմաց և ենթակա չէ ժառանգման:

11. Շահառուի և դայակի կամ հաստատության միջև կնքված ծառայությունների մատուցման պայմանագրի փոփոխության կամ լուծման դեպքում շահառուն այդ մասին տեղեկացնում է տարածքային կենտրոնին՝ փոփոխությունը

կատարելուց կամ պայմանագիրը լուծելուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում՝ ներկայացնելով փոփոխված պայմանագրի պատճենը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

25.12.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ